



Համարը N 145-Ն

*Տեսակը Պաշտոնական
Ինկորպորացիա*

*Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2014.02.26/8(1021).1
Հոդ.120.1*

*Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան*

*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 27.02.2014*

*Ընդունման ամսաթիվը 30.01.2014
Ստորագրման ամսաթիվը 21.02.2014
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

☐ Օանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, 26.12.19 N 1923-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «է» պարբերությունն ուժի մեջ կմտնի 01.04.2020 թվականին:

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2014 թվականի N 145-Ն

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 10-րդ հոդվածի 6-րդ, 11-րդ հոդվածի 4-րդ ու 10-րդ և 37-րդ հոդվածի 4-րդ մասերի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

(նախարարը լրաց. 04.06.15 N 582-Ն)

1. Սահմանել, որ՝

1) պետական նպաստների բնագավառի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է.

2) ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն տրամադրող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված տարածքային մարմինները Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններն են, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Արարատի, Վանաձորի, Գյումրու և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինները:

(1-ին կետը խմբ. 04.06.15 N 582-Ն, փոփ. 12.01.17 N 3-Ն)

2. Հաստատել՝

1) ընտանիքների անապահովության գնահատման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ցանկը՝ ըստ ընտանիքների անապահովության գնահատման վրա ազդեցության գործակցի արժեքների՝ համաձայն N 4 հավելվածի.

4) անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամտի հաշվարկման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

5) ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման, ձևավորման, անհատական տվյալների՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների միջև փոխանակման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի.

6) սոցիալական բանկի, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում հաշվառված անձանց մասին Հայաստանի Հանրապետության նախարարությունների և այլ պետական մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև փոխանակվող տեղեկատվությունը՝ համաձայն N 7 հավելվածի.

7) ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության նշանակման և վճարման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի.

8) *(Ենթակետն ուժը կորցրել է 29.12.15 N 1566-Ն)*

9) *(Ենթակետն ուժը կորցրել է 12.01.17 N 3-Ն)*

10) *(Ենթակետն ուժը կորցրել է 12.01.17 N 3-Ն)*

11) ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա խորհրդի՝ ավելի վճարված գումարների վերադարձման վերաբերյալ առաջարկության մասին որոշում ընդունելու և ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ ժամանակացույց կազմելու կարգը՝ համաձայն N 12 հավելվածի.

12) ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության վճարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից միջոցների հատկացման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի:

(2-րդ կետը փոփ. 04.06.15 N 582-Ն, 29.12.15 N 1566-Ն, 12.01.17 N 3-Ն)

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ ապահովել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց մասին համապատասխան տեղեկատվության փոխանակումը:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին ապահովել՝

1) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների միջոցով նպաստների նշանակման և վճարման գործընթացները՝ օգտագործելով 2013 թվականին գործող օրենսդրությամբ նպաստի տվյալ տեսակի նշանակման համար հաստատված՝ տպագրված ձևաթղթերը.

2) ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակները բնակչության համար առավել տեսանելի վայրերում պարտադիր փակցնելը.

3) սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններին) իրավաբանական օգնությամբ՝ քաղաքացիների (ընտանիքների) կողմից ավելի ստացված գումարների վերադարձման կամ համապատասխան դատարան հայցադիմումներ ներկայացնելու գործում.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքների հաշվառման (փաստագրման) աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, իսկ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) սպասարկման տարածքում մեկից ավելի համայնքների առկայության դեպքում՝ աշխատանքների կազմակերպումը համայնքներում՝ դրանցում ներգրավելով տեղական ինքնակառավարման մարմինները.

5) յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամսվա մինչև 15-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ներկայացնել տեղեկատվություն նախորդ կիսամյակի ընթացքում՝ քաղաքացիների (ընտանիքների) կողմից ավելի ստացված գումարների վերադարձման մասին:

(4-րդ կետը փոփ., լրաց. 04.06.15 N 582-Ն)

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակների պարտադիր տեղադրումը՝

1) համապատասխանաբար նախարարության, մարզպետարանների, քաղաքապետարանի պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև համացանցային կայքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքապետարանների և գյուղապետարանների կայքէջերում՝ համաձայն N 14 հավելվածի.

2) այն քաղաքապետարանների և գյուղապետարանների համացանցային կայքէջերում, որոնց կայքէջերը կձևավորվեն առյուծ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

6. Սահմանել, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում` 2013 թվականի դեկտեմբերի դրությամբ հաշվառված կենսաթոշակառուների կենսաթոշակի չափը 2014 թվականի ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի ամբողջական եկամտի կազմում հաշվի է առնվում 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված կենսաթոշակի չափով:

6.1. Սահմանել, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ հաշվառված անձի կենսաթոշակի, ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը 2019 թվականի ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի ամբողջական եկամտի կազմում հաշվի են առնվում 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված չափով:

(6.1-ին կետը լրաց. 17.01.19 N 22-Ն, 25.04.19 N 474-Ն)

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2014 թ. փետրվարի 21
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ
(հավելվածն ուժը կորցրել է 04.06.15 N 582-Ն)**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման համար օգտագործվող բնութագրիչների` յուրաքանչյուրին համապատասխանող թվային արժեքների, գործակիցների մեծությունների, ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի հետ կապված հարաբերությունները:

2. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ բնութագրիչները`

- 1) ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը.
- 2) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը.
- 2.1) ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվը.
- 3) բնակավայրը.
- 4) ընտանիքի բնակարանային պայմանները.
- 5) անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական զննում անցնելու հանգամանքը.
- 6) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.
- 7) անշարժ գույքի հետ կապված գործարքներ կատարելը.
- 8) ապրանքների ներմուծման և արտահանման համար ընտանիքի անդամներից մեկի կողմից մաքսային վճարների կատարումը.

9) ամատային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը.

10) ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնի, ինչպես նաև «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի առաջարկությամբ արված եզրակացությունը.

11) ընտանիքի եկամուտը.

12) 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի քանակը.

13) վարկային պարտավորությունների գծով 100 հազար դրամ և ավելի միջին ամսական մարում կատարելու հանգամանքը:

(2-րդ կետը փոփ. 30.01.15 N 70-Ն, լրաց. 12.01.17 N 3-Ն, 13.07.17 N 841-Ն, լրաց. 26.12.19 N 1923-Ն)

3. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, դրա ծածկագիրը, թվային արժեքը՝

Սոցիալական խմբի անվանումը	Ծածկագիրը	Անապահովության միավորը (Pi)
1) հաշմանդամության I խումբ ունեցող անձ	Հ11	48
2) հաշմանդամության II խումբ ունեցող անձ	Հ22	39
3) հաշմանդամության III խումբ ունեցող անձ	Հ33	28
4) հաշմանդամություն ունեցող երեխա	Հ44	45
5) երեխա՝ մինչև 5 տարեկանը լրանալը	Ս55	35
6) երեխա՝ 5 տարեկանից մինչև 18 տարեկանը լրանալը	Ս66	33
7) միակողմանի ծնողագուրկ երեխա	Մ23	43
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխա	Ե56	50
9) միայնակ մոր երեխա	Մ45	30
10) ամուսնալուծված անձի երեխա	Ա34	26
11) ուսանող՝ մինչև 23 տարեկան	Ս12	22
12) չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան	Ա77	30
13) հղի կին (12 շաբաթական և ավելի ժամկետով)	Հ00	35
14) գործազուրկ	Գ99	17
15) առանձին խմբի գործազուրկ	Գ98	22
15.1) խնամքին երեխա ունեցող կին	Գ97	17
15.2) աշխատող անձ	Գ96	17
15.3) սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձ	Ս96	18
16) կենսաթոշակառու	Կ88	36
17) միայնակ չաշխատող կենսաթոշակառու	Կ87	37
18) տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր)	Կ86	39
19) ընտանիքի «բացակա» կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անդամ		12
20) հարմար աշխատանքից հրաժարված անձ	Գ95	10

(3-րդ կետը փոփ. 30.01.15 N 70-Ն, 31.08.15 N 987-Ն, փոփ., խմբ., լրաց. 13.07.17 N 841-Ն, լրաց. 16.05.19 N 567-Ն, փոփ., լրաց. 26.12.19 N 1923-Ն)

4. Ընտանիքի անապահովության միավորը որոշելիս՝ ընտանիքի «հարգելի բացակա» անդամն ընտանիքի անդամ չի դիտարկվում:

5. Միաժամանակ մի քանի սոցիալական խմբերի պատկանելու դեպքում ընտանիքի անդամի անապահովության միավորը հաշվարկվում է յուրաքանչյուր սոցիալական խմբի անապահովության միավորների գումարման միջոցով՝ օգտագործելով ճշգրտման գործակիցներ: Այս դեպքում սոցիալական տարբեր խմբերի անապահովության միավորները դիտարկվում են նվազող հաջորդականությամբ՝ առաջին միավորը վերցվում է ամբողջությամբ, երկրորդը՝ 0,3, իսկ երրորդը և չորրորդը՝ 0,1՝ ճշգրտման գործակիցներով:

6. Միակողմանի ծնողագուրկ երեխայի, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, ամուսնալուծված ընտանիքի երեխայի, միայնակ մոր երեխայի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի սոցիալական խմբերի դեպքերում, որպես 2-րդ սոցիալական խումբ, հաշվի է առնվում նրանց՝ անչափահաս երեխա լինելու հանգամանքը՝ իրենց ժամկետներով:

7. Ընտանիքի անապահովության միջին միավորը (Pմիջ.) որոշելու համար ընտանիքի բոլոր անդամների անապահովության միավորների գումարը բաժանվում է ընտանիքի սոցիալական անձնագրում հաշվառված (բացառությամբ «հարգելի բացակա» անդամի) անձանց թվի վրա՝

$$P_{\text{միջ.}} = (1/n) \times (P_1 + P_2 + \dots + P_n),$$

որտեղ n-ն ընտանիքի սոցիալական անձնագրում հաշվառված (բացառությամբ «հարգելի» ճանաչված «բացակա» անդամի) անձանց թիվն է:

8. Ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը՝

1) ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{\text{ընտ.}}$ գործակցով՝

$$K_{\text{ընտ.}} = 1,00 + 0,02 m,$$

որտեղ m-ն ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն է:

2) ընտանիքի անաշխատունակ անդամներն են երեխաները կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ կամ տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող չաշխատող անձինք:

8.1. Ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{եր}$ գործակցով՝

$$K_{եր} = 1,00 + 0,01 m,$$

որտեղ m-ն ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թիվն է.

(8.1-ին կետը լրաց. 13.07.17 N 841-Ն)

9. Ընտանիքի «բացակա» անդամի՝ անապահովության գնահատման տեղեկատվական բազայում ծննդյան ամսաթվի առկայության դեպքում, $K_{նստ}$ գործակցից հաշվելիս, անաշխատունակ լինելը հաշվի է առնվում իր տարիքին համապատասխան: Ծննդյան ամսաթվի բացակայության դեպքում նա դիտարկվում է որպես ընտանիքի չափահաս աշխատունակ անդամ (18-63 տարեկան):

10. Բնակավայրը ընտանիքի անապահովությունը գնահատելիս, հաշվի է առնվում $K_{տ}$ գործակցով: Բնակավայրերի ցանկը, ըստ $K_{տ}$ գործակցի արժեքների, նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածում:

11. Ընտանիքի անապահովության գնահատման միավորի վրա ընտանիքի բնակարանային պայմանների ազդեցությունը որոշվում է $K_{բն}$ գործակցով՝

Բնակարանային պայմանները

$K_{բն}$ Օսովկագիրը

- | | |
|---|--------------|
| 1) աղետի հետևանքով տրամադրված տնակ | 1,2 04 |
| 2) ոչ հիմնական (Ժամանակավոր) շինություն, տնակ | 1,06 05 |
| 3) վթարային (3-րդ կամ 4-րդ աստիճանի) բնակարան | 1,05 03 |
| 4) հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ (բնակարան) | 1,03 02 |
| 5) այլ պայմաններ (վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, առողջարան, հիվանդանոց, զբոսաշրջության հանգրվան, մանկապարտեզ, դպրոց, նկուղ, ավտոտնակ, որոշակի բնակության վայր չունենալը և այլն) | 1,02 06 և 07 |
| 6) սեփական առանձնատուն | 1,00 01 |
| 7) բնակարան բազմաբնակարան շենքում | 1,00 00: |

12. Անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական գնում անցնելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն են գործում $K_{ավ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ավ}$ -ն հավասարվում է 1.0-ի:

13. Ընտանիքի որևէ անդամի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{ա}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ա}$ -ն հավասարվում է 1.0-ի:

14. Ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն է գործում $K_{ագ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{ագ}$ -ն հավասարվում է 1.0-ի:

15. Սայրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային վճարներ կատարելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է $K_{մաքս}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք: Սույն պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{մաքս}$ -ը հավասարվում է 1.0-ի:

16. Ամառային ամիսների ընթացքում ընտանիքի կողմից էլեկտրաէներգիայի սպառման հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է $K_{է}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք, եթե ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը գերազանցում է միջին ամսական սահմանային չափաքանակները, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$1) w = 1,3 \times (80 \text{ կՎտ.ժամ} + 40 \text{ կՎտ. ժամ} \times n),$$
 որտեղ n-ն ընտանիքի անդամների թիվն է.

2) նշված պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{է}$ -ն հավասարվում է 1.0-ի:

16.1. 12 ամիսների ընթացքում ընտանիքի կողմից բնական գազի սպառման հանգամանքն՝

1) ընտանիքի անապահովության միավորի վրա ազդում է $K_{բգ}$ գործակցի միջոցով, որն ունի 0-ական արժեք, եթե 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի քանակը գերազանցում է սահմանային չափաքանակը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 3-Ն որոշմամբ նախատեսված փորձնական ծրագրի շրջանակներում սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը.

2) նշված պայմանը չբավարարող մնացած ընտանիքների համար $K_{բգ}$ -ն հավասարվում է 1.0-ի:

(16.1-ին կետը լրաց. 12.01.17 N 3-Ն)

16.2. Ընտանիքի որևէ չափահաս անդամի՝ վարկային պարտավորությունների գծով 100 հազար դրամ և ավելի միջին ամսական մարում կատարելու հանգամանքը

1. Սույն կարգով կարգավորվում են իրեն անապահով համարող ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ գնահատման համակարգ) հաշվառվելու (փաստագրվելու) հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում է հաշվառվելու (փաստագրվելու) համար անհրաժեշտ տվյալների և (կամ) փաստաթղթերի ցանկը:

2. Գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող) դիմում է իր բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (Բաժին) (այսուհետ՝ տարածքային կենտրոն) ներկայացնելով դիմում-հայտարարագիր՝ համաձայն N 1 ձևի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 5 հավելվածի 1-ին կետով նախատեսված տեղեկանք-հայտարարագիրը (միայն դիմերեսը լրացված) և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):

(2-րդ կետը լրաց. 30.01.15 N 70-Ն, փոփ. 04.06.15 N 582-Ն)

3. Սույն կարգով սահմանված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների (կազմակերպությունների) էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:

4. Դիմում-հայտարարագիրը՝ անհրաժեշտ փաստաթղթերով, հաշվառվում է դիմումների հաշվառման մատյանում՝ համաձայն N 2 ձևի:

5. Դիմողի ընտանիքի համար լրացվում է սոցիալական անձնագիր՝ երկու օրինակից՝ համաձայն N 3 ձևի, որի մեկ օրինակը մնում է տարածքային կենտրոնում, իսկ մյուսը տրամադրվում է դիմողին:

6. Սոցիալական անձնագիրը լրացվում է համաձայն N 4 ձևի: Սոցիալական անձնագրում լրացված տվյալները մուտքագրվում են գնահատման համակարգի տեղեկատվական բազա (այսուհետ՝ տեղեկատվական բազա):

II. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7. Ընտանիքի կազմը որոշվում է ընտանիքի չափահաս անդամներից մեկի կողմից (ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ) տրված հայտարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային ստորաբաժանման կողմից (այսուհետ՝ տեղական ռեգիստր) տարածքային կենտրոնի՝ առցանց հարցման հիման վրա տրամադրած տեղեկատվության հիման վրա: Տեղեկատվության մեջ նշվում է ընտանիքի բնակության վայրում (կացարանում)՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց, իսկ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ կամ քրեակատարողական հիմնարկում կամ հետախուզման մեջ գտնվելու մասին:

(7-րդ կետը փոփ. 12.01.17 N 3-Ն)

8. Ընտանիքի՝ գտնվելու վայրում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող անդամը սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում հաշվառվում է որպես ընտանիքի «բացակա» նշված անդամ, եթե առկա է տարածքային կենտրոնի և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելության մասին արձանագրությունը: «Բացակա» լրացված ընտանիքի անդամի համար սոցիալական անձնագրում ամրագրվում և տեղեկատվական բազայում մուտքագրվում է «հարգելի բացակա», եթե՝

- 1) ընտանիքի տվյալ անդամը՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ ընտանիքի անդամ չհամարվող անձ է.
- 2) տեղական ռեգիստրում՝ տվյալ բնակության վայրում հաշվառված ընտանիքի բոլոր անդամներն են նշված «բացակա», և սոցիալական անձնագիրը լրացվում է տվյալ բնակության վայրում փաստացի հիմունքներով հաշվառված և բնակվող ընտանիքի համար.
- 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ գտնվում է հետախուզման մեջ.
- 4) ընտանիքի անդամներից մեկի նախկին ամուսինն է, և առկա է ամուսնության դադարման իրավական հիմքը.
- 5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է ընտանիքի անդամների խնամակալ կամ հոգաբարձու.
- 6) ընտանիքի բացակա անդամը 6 ամիս և ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայում է և ներկայացնում է փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունից դուրս հաշվառված լինելու (բնակվելու) մասին:
9. Ընտանիքի կազմը և փաստացի բնակության հասցեն որոշվում են տարածքային կենտրոնի, տեղական ինքնակառավարման մարմնի և խորհրդի մեկական ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելությամբ, եթե՝
 - 1) սույն կարգի 7-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ որպես դիմողի ընտանիքի բնակության հասցե նշված է երկրաշարժի հետևանքով քանդված շինության հասցեն.
 - 2) դիմողը ներառված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրում՝ ոչ իր փաստացի բնակության վայրում.
 - 2.1) ընտանիքը չունի որոշակի բնակության վայր և ընտանիքի բոլոր անդամները հաշվառված չեն բնակչության

պետական ռեզիստրում: Այս դեպքում ընտանիքը գնահատման համակարգում հաշվառվում է տարածքային կենտրոնի հասցեով:

3) ուսումնասիրության մասին արձանագրությունն ստորագրվում է տնային այցելությանը մասնակից բոլոր պաշտոնատար անձանց կողմից:

(9-րդ կետը լրաց. 19.09.19 N 1249-Ն)

10. Մինևույն բնակության վայրում բնակվող յուրաքանչյուր ընտանիքի կամ դրանցից մեկի համար լրացվում է առանձին սոցիալական անձնագիր, եթե առկա են՝

1) բնակարանային մակերեսի բաժանման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

2) մինևույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) ընտանիքների առանձին տնտեսություն վարելու հանգամանքը (առանձին մուտքեր, առանձին ջրաչափեր, առանձին էլեկտրական հաշվիչներ կամ առանձին տնտեսություն վարելու նմանատիպ այլ հանգամանքներ), որը հաստատվել է խորհրդի առաջարկությամբ և տարածքային կենտրոնի կատարած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությամբ:

11. Սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված կարգով առանձին ընտանիք ճանաչված դիմողի սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում լրացվում են միայն դիմողի ընտանիքի անդամների տվյալները:

12. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խմբին համապատասխան ընտանիքի սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում լրացվում է դրա ծածկագիրը:

13. Սոցիալական խմբերի ծածկագրերը և դրանց ամրագրման համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերն են (փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանցում ամրագրված տվյալները ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում, և առկա է դրանք առցանց ինքնաշխատ եղանակով ստանալու հնարավորությունը)՝

<u>Սոցիալական խմբի անվանումը</u>	<u>Ծածկագիրը</u>
1) հաշմանդամության I խումբ ունեցող անձ	Հ11
2) հաշմանդամության II խումբ ունեցող անձ	Հ22
3) հաշմանդամության III խումբ ունեցող անձ	Հ33
4) հաշմանդամություն ունեցող երեխա պահանջվող փաստաթուղթը՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի տեղեկանքի լուսապատճենը և տեղեկանք կենսաթոշակ (հաշմանդամության նպաստ) նշանակող մարմնից.	Հ44
5) երեխա՝ մինչև 5 տարեկանը լրանալը	Ս55
6) երեխա՝ 5 տարեկանից մինչև 18 տարեկանը լրանալը պահանջվող փաստաթուղթը՝ ծննդյան վկայականի լուսապատճենը կամ 16 տարեկանը լրացած անձանց համար՝ անձնագրի (նույնականացման քարտ) լուսապատճենը.	Ս66
7) միակողմանի ծնողազուրկ երեխա պահանջվող փաստաթուղթը՝ ծնողի մահվան վկայականի պատճենը կամ մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենը, ինչպես նաև կենսաթոշակի կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքի դեպքում՝ տեղեկանք կենսաթոշակ (նպաստ) նշանակող մարմնից.	Ս23
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխա պահանջվող փաստաթուղթը՝ ծնողների կամ միակ ծնողի մահվան վկայականի պատճենը կամ մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենը, ինչպես նաև տեղեկանք խնամակալության և հոգաբարձության մարմնից որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառելու մասին, կենսաթոշակի կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքի դեպքում՝ տեղեկանք կենսաթոշակ (նպաստ) նշանակող մարմնից.	Ե56
9) միայնակ մոր երեխա պահանջվող փաստաթուղթը՝ ծննդյան վկայականի, որում հոր տվյալներին վերաբերող տողում չկա որևէ գրանցում, լուսապատճենը, մնացած դեպքերում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնից տեղեկանք այն մասին, որ հոր մասին տվյալները լրացված են մոր ցուցումով, իսկ Հայաստանի Հանրապետությունից դուրս ծնված՝ Հայաստանում բնակվող երեխաների համար՝ այդ պետություններում սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանքներ.	Ս45
10) ամուսնալուծված անձի երեխա պահանջվող փաստաթուղթը՝ երեխայի ծնողների ամուսնալուծության վկայականի կամ ամուսնալուծության մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի (2005 թվականի մայիսի 1-ից հետո կայացված), երեխայի հայրության որոշման վկայականի, եթե երեխայի ծնողները բնակվում են առանձին, կամ երեխայի ծնողներից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի լուսապատճենները.	Ս34
11) ուսանող՝ մինչև 23 տարեկան	Ս12

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու մասին.

12) չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան Ա77

պահանջվող փաստաթուղթը՝ անձնագրի (նույնականացման քարտ) լուսապատճենը.
13) հղի կին (12 շաբաթական և ավելի ժամկետով) Հ00

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք համապատասխան բուժհաստատությունից.
14) գործազուրկ Գ99

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք (տվյալ) զբաղվածության տարածքային կենտրոնից.
15) առանձին խմբի գործազուրկ Գ98

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք (տվյալ) զբաղվածության տարածքային կենտրոնից, ինչպես նաև միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում ստացված տվյալ.

15.1) խնամքին երեխա ունեցող կին Գ97

պահանջվող փաստաթուղթը՝ հայտարարություն երեխա (այդ թվում՝ նաև խորթ) խնամելու մասին, իսկ իր երեխային չխնամելու դեպքում՝ նաև խնամակալության մասին փաստաթղթի պատճենը.

15.2) աշխատող անձ Գ96

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք աշխատավայրից՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների մասին.

15.3) սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձ Մ96

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք գործատուից՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների մասին և սեզոնային աշխատանքային պայմանագրի պատճենը.

16) կենսաթոշակառու Կ88

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք կենսաթոշակ (ծերության նպաստ) նշանակող իրավասու մարմնից.

17) միայնակ չաշխատող կենսաթոշակառու Կ87

պահանջվող փաստաթուղթը՝ դիմում-հայտարարություն.

18) տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր) Կ86

19) պարտադիր կամ այլընտրանքային զինվորական ծառայության շարքային կազմում գտնվող անձ Օ21

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք զինկոմիսարիատից.

20) հարմար աշխատանքից հրաժարված անձ Գ95

պահանջվող փաստաթուղթը՝ եզրակացություն (տվյալ) ստացված զբաղվածության տարածքային կենտրոնից:

(13-րդ կետը փոփ., լրաց. 30.01.15 N 70-Ն, խմբ., փոփ., լրաց. 13.07.17 N 841-Ն, լրաց. 16.05.19 N 567-Ն, փոփ., լրաց. 26.12.19 N 1923-Ն)

14. Սոցիալական խմբերի ամրագրման առանձնահատկություններն են՝

1) կենսաթոշակառու է համարվում կենսաթոշակի կամ ծերության նպաստի իրավունք ունեցող անձը.

2) միայնակ մոր երեխա է համարվում այն երեխան, որի մայրը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, կամ որը որդեգրվել է ամուսնության մեջ չգտնվող կնոջ կողմից, ընդ որում, միայնակ մոր երեխայի ծածկագիրը չի կիրառվում, եթե միայնակ կնոջ խնամքի տակ գտնվող մեկից ավելի երեխաների հայրանունը (բացառությամբ երկվորյակ կամ ավելի ծնված բոլոր երեխաների հայրանունից) նույնն է.

3) միակողմանի ծնողազուրկ երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 21 տարեկանը չլրացած անձը կամ մինչև 23 տարեկանը չլրացած անձը, եթե սովորում է ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ (մինչև հաջորդ տարվա սեպտեմբեր ամսվա 1-ը ներառյալ), բայց ոչ ավելի, քան մինչև այն ավարտելը (մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ներառյալ).

4) առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 23 տարեկանը չլրացած անձը.

5) կենսաթոշակային տարիքը լրացած և հաշմանդամություն ունեցող անձանց համար «կենսաթոշակառու» և «տարեց կենսաթոշակառու» սոցիալական խմբերը որպես 2-րդ սոցիալական խումբ չեն ամրագրվում.

6) կենսաթոշակային տարիքը չլրացած և հաշմանդամություն ունեցող անձանց համար «գործազուրկ» և «առանձին խմբի գործազուրկ» սոցիալական խմբերը որպես 2-րդ սոցիալական խումբ չեն ամրագրվում.

6.1) «խնամքին երեխա ունեցող կին» և «սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձ» սոցիալական խմբերը

միայնաց կամ այլ սոցիալական խմբերի հետ չեն ամրագրվում.

6.2) առանձին խմբի գործազուրկ է համարվում այն գործազուրկը, որը՝

ա. երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում և 16-30 տարիքային խմբում է, թրաֆիքինգի գոհ է, վերադարձել է քրեակատարողական հիմնարկից (մինչև երեք տարի), կրում է այլընտրանքային պատիժ (ամբողջ ժամանակահատվածը և դրան հաջորդող մեկ տարին), թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածումը դադարեցրած՝ ռեմիսիայի շրջանում գտնվող անձ է,

բ. 31-63 տարիքային խմբում է և մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

6.3) սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձ է համարվում այն անձը, որը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1480-Ն որոշման հավելվածով սահմանված աշխատանքներից որևէ մեկը և այդ մասին, համաձայն Աշխատանքային օրենսգրքի 100-րդ հոդվածի, գործատուի հետ կնքել է սեզոնային աշխատանքային պայմանագիր.

6.4) հարմար աշխատանքից հրաժարված անձ է համարվում այն գործազուրկը կամ առանձին խմբի գործազուրկը կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անձը, որի վերաբերյալ զբաղվածության տարածքային կենտրոնը տրամադրել է հարմար աշխատանքից հրաժարվելու վերաբերյալ եզրակացություն.

7) միայնակ չաշխատող կենսաթոշակառու է համարվում այն չաշխատող կենսաթոշակառուն կամ ծերության կամ հաշմանդամության նպաստ ստացող անձը, որը չունի չափահաս՝ կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստի իրավունք չունեցող զավակներ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ խնամողներ և դրա մասին տվյալ անձը (անձինք) տալիս է (են) դիմում-հայտարարություն՝ համաձայն N 5 ձևի.

8) «Կ 87» ծածկագիրը չի ամրագրվում, եթե՝

ա. տվյալ անձը (անձինք) ունի (ունեն) 18 տարեկանը լրացած և ավելի բարձր տարիքի, կենսաթոշակի կամ ծերության կամ հաշմանդամության նպաստի իրավունք չունեցող առնվազն մեկ զավակ կամ ծնող (ծնողներ)՝ անկախ նրա (նրանց) բնակության վայրից,

բ. տվյալ անձի (անձանց) հետ սոցիալական անձնագրում հաշվառված է 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի՝ կենսաթոշակի կամ ծերության կամ հաշմանդամության նպաստի իրավունք չունեցող անձ (անձինք)՝ բացառությամբ այն դեպքի, եթե այդ անձի (անձանց) համար սոցիալական անձնագրում ամրագրված և տեղեկատվական բազայում մուտքագրված է «հարգելի բացակա» տվյալը.

9) «Մ 12» ծածկագրի ժամկետը նշվում է մինչև հաջորդ տարվա սեպտեմբեր ամսվա 1-ը ներառյալ, ավարտական տարում՝ մինչև հունիսի 30-ը ներառյալ.

10) գործազուրկ անձանց համար «առանձին խմբի գործազուրկ» սոցիալական խումբը որպես 2-րդ սոցիալական խումբ չի ամրագրվում.

11) գործազուրկ անձանց համար «Գ99» սոցիալական խումբն ամրագրվում է զբաղվածության տարածքային կենտրոնում տվյալ անձին գործազուրկի կարգավիճակ տալու օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս անց:

(14-րդ կետը լրաց., փոփ. 30.01.15 N 70-Ն, լրաց. 31.08.15 N 987-Ն, փոփ., լրաց. 13.07.17 N 841-Ն, խմբ., լրաց. 16.05.19 N 567-Ն, փոփ. 19.09.19 N 1249-Ն, փոփ., լրաց. 26.12.19 N 1923-Ն)

15. Ընտանիքում տեխնիկական գնում անցած անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայության հանգամանքն ամրագրվում է «02» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

16. Ընտանիքի որևէ անդամի՝

1) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքն ամրագրվում է «03» ծածկագրով.

2) սահմանափակ պատասխանատվության ընկերության կամ լիակատար տնտեսական ընկերակցության կամ փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր (մասնակից) լինելու հանգամանքն ամրագրվում է «07» ծածկագրով.

3) վստահության վրա հիմնված՝ ընկերության բաժնետեր լինելու հանգամանքն ամրագրվում է «08» ծածկագրով.

4) սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքները չեն ամրագրվում, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

17. Ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքն ամրագրվում է «Կ» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

18. Ընտանիքի անդամներից մեկի կողմից ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ կատարելու հանգամանքն ամրագրվում է «06» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

19. Ընտանիքի կողմից ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանքն ամրագրվում է «05» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

19.1. Ընտանիքի կողմից 12 ամիսների ընթացքում բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու հանգամանքն ամրագրվում է «09» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

(19.1-ին կետը լրաց. 12.01.17 N 3-Ն)

19.2. Ընտանիքի որևէ չափահաս անդամի՝ վարկային պարտավորությունների գծով 100 հազար դրամ և ավելի միջին ամսական մարում կատարելու հանգամանքն ամրագրվում է «Վ» ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

(19.2-րդ կետը լրաց. 26.12.19 N 1923-Ն)

20. Սույն կարգի 15-19.2-րդ կետերով սահմանված կարգով խորհրդի ներկայացրած առաջարկությունը և տարածքային կենտրոնի՝ համապատասխան տեղեկատվությունը չամրագրելու մասին որոշումը գործում են՝

1) սույն կարգի 15-16-րդ և 19.1-19.2-րդ կետերով սահմանված տեղեկատվությունների դեպքում՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով:

2) սույն կարգի 17-19-րդ կետերով սահմանված տեղեկատվությունների դեպքում՝ մինչև հաջորդ տեղեկատվությունն ստանալու ամիսը:

3) սույն կետով սահմանված ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում համապատասխան տեղեկատվության ամրագրման հարցը կրկին քննարկվում է սահմանված կարգով:

(20-րդ կետը փոփ., լրաց. 12.01.17 N 3-Ն, փոփ. 26.12.19 N 1923-Ն)

21. Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնի եզրակացությունն ամրագրվում է՝

1) ընտանիքին սոցիալապես անապահով ճանաչելու դեպքում՝ «այո» ծածկագրով:

2) ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու դեպքում՝ «ոչ» ծածկագրով:

22. Ընտանիքի բնակարանային պայմանների ծածկագրերն են և դրանց ամրագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝

Բնակարանային պայմանները

Ծածկագիրը

1) աղետի հետևանքով տրամադրված տնակ 04

պահանջվող փաստաթուղթը՝ տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.

2) ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ 05

պահանջվող փաստաթուղթը՝ տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.

3) վթարայնության 3-րդ կամ 4-րդ աստիճան ունեցող բնակարան 03

պահանջվող փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորված մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիմքով, սույն եզրակացությունը տալու օրվանից հետո սույն շինության ամրացման աշխատանքներ իրականացված չլինելու դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքը.

4) հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ (բնակարան) 02

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք հանրակացարանի ղեկավար կառավարման մարմնից.

5) այլ պայմաններ (վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, առողջարան, հիվանդանոց, զբոսաշրջության հանգրվան, մանկապարտեզ, դպրոց, նկուղ, ավտոտնակ և այլն) 06

պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից կամ հյուրանոցի, առողջարանի, հիվանդանոցի, զբոսաշրջության հանգրվանի, մանկապարտեզի, դպրոցի կառավարման ղեկավար մարմնից.

6) որոշակի բնակության վայր չունենալը 07

հայտարարությամբ և տարածքային կենտրոնի կողմից կատարված տեղազննության արդյունքում (ահագանգման արդյունքում):

23. Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են՝

1) ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված՝ հաշվարկված՝ վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» N 853-Ն որոշմամբ սահմանված՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկի.

2) կենսաթոշակը.

3) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում՝ նպաստները.

4) «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարները (այսուհետև՝ պարգևավճար).

5) անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը.

6) «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված ամսական դրամական բավարարումը:

(23-րդ կետը լրաց. 30.01.15 N 70-Ն)

24. Աշխատավարձի չափը հաշվի է առնվում դիմելու պահին նախորդած 3 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատավարձի չափի մասին տվյալը դիմողի կողմից ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա ընթացքում, եթե այդ ամիսը չի հաջորդում տվյալ ընտանիքի փաստագրման ամսվան:

25. Եթե դիմողը մինչև դիմելու ամիսն աշխատել է երեք ամսվանից քիչ, ապա աշխատավարձի չափը հաշվի է առնվում դիմելու ամսվան նախորդող ամսվա աշխատավարձի չափով, իսկ դիմողի՝ աշխատանքից ազատվելու դեպքում աշխատավարձի չափի մասին տվյալը հանվում է տեղեկատվական բազայից՝ դրա մասին համապատասխան փաստաթուղթը ներկայացվելուց անմիջապես հետո՝ մեկօրյա ժամկետում:

25.1. Ընտանիքի «բացակա» անդամի աշխատավարձի ամսական չափը հաշվարկվում է ընտանիքի չափահաս անդամի հայտարարության հիման վրա՝ տարվա համար հայտարարված եկամտի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով՝ հետևյալ դեպքերում՝

1) եթե ընտանիքի «բացակա» անդամը Հայաստանի Հանրապետությունում է և ընտանիքի անդամներից որևէ մեկի ամուսինն է.

2) եթե ընտանիքի «բացակա» անդամը Հայաստանի Հանրապետությունից բացակայում է մինչև 6 ամիս ժամկետով՝ բացառությամբ ուսման կամ բուժման նպատակով բացակայելու դեպքերի (որի մասին ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ) և ընտանիքի անդամներից որևէ մեկի ամուսինն է:

(25.1-ին կետը լրաց. 13.07.17 N 841-Ն)

26. Աշխատավարձի, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղված այլ միջոցների չափերն ստուգվում են պետական կենսաթոշակային համակարգի անձնավորված տվյալների շտեմարանում:

27. Կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, ամսական դրամական բավարարման չափերը, որպես եկամուտ, հաշվի են առնվում դիմելու ամսվան նախորդող ամսվա չափով:

(27-րդ կետը լրաց. 30.01.15 N 70-Ն)

28. Եթե ընտանիքն ստանում է կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակ կամ նպաստ, ապա կենսաթոշակի կամ նպաստի չափն ամրագրվում է դրա իրավունքն ունեցող անձանց վերաբերող տողերում՝ համամասնորեն:

(28-րդ կետը փոփ. 13.07.17 N 841-Ն)

29. Անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը հաշվարկվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 5 հավելվածի:

30. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների չափերը փոփոխվում են գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազայում, դրանց բարձրացման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

31. Ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չեն մտնում՝

1) «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված իրավունքների իրականացման շրջանակներում վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները.

2) հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում մարտական հերթապահություն կատարող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների դրամական ապահովությանն ուղղված միջոցները՝ զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանքի հիման վրա.

3) սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները՝ գործատուի կողմից տրված տեղեկանքի և սեզոնային աշխատանքային պայմանագրի պատճենի հիման վրա:

(31-րդ կետը լրաց. 31.08.15 N 987-Ն, խմբ. 16.05.19 N 567-Ն, փոփ., լրաց. 26.12.19 N 1923-Ն)

32. Տարածքային կենտրոնը դիմում-հայտարարագիրը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առցանց հարցում է կատարում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական բազա՝ ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) հողամասի հողատեսքի, դրա կադաստրային գուտ եկամտի և հողատարածքի մակերեսի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Առցանց հարցման օրը համարվում է ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի, դրա կադաստրային գուտ եկամտի և հողատարածքի մակերեսի մասին տեղեկանքը ներկայացնելու օր:

2) Բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազա՝ դիմողի անունով՝ ընտանիքի բնակության վայրում (կացարանում)՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին, իսկ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Առցանց հարցման օրը համարվում է անհրաժեշտ տվյալը ներկայացնելու օր:

33. Տարածքային կենտրոնը, ըստ անհրաժեշտության, համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ եղանակով (դիմելու պահին) կամ դիմողի կողմից ներկայացված տեղեկանքի հիման վրա ստանում է դիմողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին ստորև թվարկվող տվյալները՝

- 1) աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների չափը.
- 2) կենսաթոշակի տեսակը և չափը.
- 3) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների չափերը և ժամկետները.
- 4) հաշմանդամության խումբը և ժամկետը.
- 5) գործազուրկի կամ առանձին խմբի գործազուրկ լինելու հանգամանքը և դրանց ժամկետները.
- 6) առանց ծնողական խնամքի մնացած լինելու հանգամանքը:

(33-րդ կետը փոփ. 13.07.17 N 841-Ն)

34. Տարածքային կենտրոնն ստանում է համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ եղանակով կամ գնահատման համակարգի տեղեկատվական բազան սպասարկող կազմակերպությունից՝ համադրման արդյունքներով ստացված, դիմողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին ստորև թվարկվող տվյալները՝

- 1) ընտանիքի որևէ անդամի՝
 - ա. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին,
 - բ. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ լիակատար տնտեսական ընկերակցության կամ փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր (մասնակից) լինելու մասին,
 - գ. վստահության վրա հիմնված ընկերության բաժնետեր լինելու մասին,
 - դ. անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու մասին,
 - ե. սպրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ կատարելու մասին,
 - զ. անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայության և տեխնիկական զննում անցնելու հանգամանքի մասին.
 - է. ընտանիքի որևէ չափահաս անդամի՝ վարկային պարտավորությունների գծով 100 հազար դրամ և ավելի միջին ամսական մարում կատարելու հանգամանքի մասին.

2) ընտանիքի կողմից ամառային ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու մասին.

3) 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի՝ սահմանված չափաքանակից ավելի սպառած լինելու մասին:

(34-րդ կետը լրաց. 12.01.17 N 3-Ն, 26.12.19 N 1923-Ն)

35. Տարածքային կենտրոնի աշխատողը ներկայացված փաստաթղթերը համեմատում է դիմում-հայտարարագրում նշված փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև բնօրինակների հետ, լուսապատճենների վրա կատարում է «Բնակականի հետ ճիշտ է» գրառումը և ստորագրում է, դիմում-հայտարարագրի վրա նշում է ստացման ամսաթիվը, ստորագրում և ընդունում է՝ դիմողին վերադարձնելով դիմում-հայտարարագրի՝ պատճենահանող թղթով պատճենահանվող օրինակը:

36. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում ներկայացված փաստաթղթերը տեսաներածվում են, և լուսապատճեններ չեն պահանջվում:

37. Տարածքային կենտրոնի աշխատողները ներկայացված փաստաթղթերում չեն կարող ուղղում կատարել՝ բացառությամբ ակնհայտ սխալների ու վրիպակների:

38. Եթե դիմում-հայտարարագրի հետ միասին չեն ներկայացվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սպա տարածքային կենտրոնի աշխատողը դիմում-հայտարարագրում կատարում է համապատասխան նշումներ և դիմում-հայտարարագրի՝ պատճենահանող թղթով պատճենահանվող օրինակը նույն օրվա ընթացքում վերադարձնում է դիմողին՝ տեղեկացնելով պակասող փաստաթղթերի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

(38-րդ կետը փոփ. 30.01.15 N 70-Ն)

39. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում դիմողը գրավոր ծանուցվում է պակասող փաստաթղթերի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու

անհրաժեշտության մասին:

40. Տարածքային կենտրոնի աշխատողը, դիմում-հայտարարագիրն ընդունելիս, դիմողին ծանոթացնում է՝

1) սոցիալական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ընտանիքների անապահովության միավորի հիման վրա նշանակվող պետական նպաստների նշանակման ու վճարման կարգերին.

2) դիմողի հետ ճշտում է ընտանիքի փաստացի կազմի ու տեղական ռեզիստրում հաշվառված անձանց, դիմում-հայտարարագրում ներառված և սույն կարգի 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված տվյալների համապատասխանությունը.

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով անհամապատասխանության հայտնաբերման դեպքում դիմողին ուղղորդում է համապատասխան պետական մարմին (կազմակերպություն)՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի մասին:

41. Տարածքային կենտրոնի աշխատողը տեղեկատվական բազա է մուտքագրում ներկայացված փաստաթղթերում առկա (ինքնաշխատ եղանակով ստացված) տվյալները (այդ թվում՝ դիմում-հայտարարագրում լրացված ընտանիքի կազմի, ինչպես նաև հաշվարկված՝ ընտանիքի հոդօգտագործումից ստացվող եկամտի մասին տվյալները)՝ մեկօրյա ժամկետում:

42. Տարածքային կենտրոնի աշխատողը տվյալ ընտանիքի համար կազմում է սոցիալական գործ՝ համաձայն N 6 ձևի, որը պահպանում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

43. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում սոցիալական գործը կազմվում է նաև էլեկտրոնային տարբերակով, որի մեջ տեսաներածվում են դիմողի ներկայացրած բոլոր փաստաթղթերը:

44. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ստացած տվյալները համեմատում է դիմողի դիմում-հայտարարագրում ներառված տվյալների հետ, համապատասխանության դեպքում դրանք մուտքագրում է տեղեկատվական բազա, իսկ տեղեկանքը եռօրյա ժամկետում սպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում (տեսաներածվում) է սոցիալական գործի մեջ:

(44-րդ կետը փոփ. 12.01.17 N 3-Ն)

45. Տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը դիմում-հայտարարագրում լրացված և սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով ստացված տեղեկանքում առկա տվյալների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին:

46. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով ստացած տվյալները համեմատում է դիմողի դիմում-հայտարարագրում ներառված տվյալների հետ և եռօրյա ժամկետում՝

1) դրանց համապատասխանության դեպքում տեղեկանքը սպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում (տեսաներածվում) է սոցիալական գործի մեջ.

2) դրանց անհամապատասխանության դեպքում դիմողին ուղղորդում է տեղական ռեզիստր՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակչության պետական ռեզիստրում հաշվառման կարգի մասին: Տեղական ռեզիստրի տրամադրած տեղեկանքը համարվում է տրված սույն կարգի 32-րդ կետով սահմանված օրը, եթե այն տարածքային կենտրոն է ներկայացվել առցանց հարցման օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում:

47. Տարածքային կենտրոնի կողմից դիմումն ընդունվելու, ինչպես նաև սույն կարգի 34-րդ կետով սահմանված տվյալներն ստանալուց հետո դիմողի բնակության վայրն սպասարկող աշխատողը 15 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տնային այցելություն՝ ուսումնասիրելու համար դիմողի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, կազմում է արձանագրություն, եզրակացություն և ներկայացնում է առաջարկություն՝

1) ընտանիքին սոցիալապես անապահով և նպաստառության ենթակա ճանաչելու մասին.

2) ընտանիքին սոցիալապես անապահով և եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու հարցը խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին.

3) ընտանիքին սոցիալապես անապահով, սակայն նպաստառության ոչ ենթակա ճանաչելու մասին.

4) ընտանիքին սոցիալապես անապահով և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություն տրամադրելու մասին.

5) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի համար սոցիալական դեպք բացելու մասին.

6) սույն կարգի 34-րդ կետով նախատեսված դեպքերում՝ խնդիրը խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին.

7) ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու մասին:

48. Սույն կարգի 47-րդ կետով սահմանված առաջարկությունը համապատասխան աշխատողը տնային այցելություն կատարելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին:

49. Տարածքային կենտրոնը սույն կարգի 34-րդ կետով սահմանված տվյալներն ստանալուց հետո՝ սույն կարգի 47-րդ կետով սահմանված կարգով տրված առաջարկությունների մասին ամփոփ տեղեկատվությունը մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ համաձայն N 7 ձևի, կցելով բարեկեցիկ ճանաչված ընտանիքների ցուցակը:

50. Դիմողը փաստագրման նպատակով դիմելու (հաշվառման կամ նախորդ փաստագրման) ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում տարածքային կենտրոն է ներկայացնում սույն կարգով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

51. Եթե հաշվառվելուց կամ փաստագրվելուց հետո 12 ամսվա ընթացքում ընտանիքի կազմում, ընտանիքին, ընտանիքի որևէ անդամին վերաբերող տվյալներում կատարվել են փոփոխություններ, ապա դիմողը 30 օրվա ընթացքում ներկայացնում

է դրանք հավաստող փաստաթղթերը:

52. Ընտանիքի բնակության վայրը փոխվելու դեպքում, դիմումի համաձայն, նոր բնակության վայրի տարածքային կենտրոնը մեկօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով դիմողի հին բնակության վայրի տարածքային կենտրոն է ուղարկում դիմումի պատճենը, որի հիման վրա հին բնակության վայրի տարածքային կենտրոնը 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է տվյալ ընտանիքի ստացած ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության մասին տեղեկանք՝ համաձայն N 8 ձևի:

(52-րդ կետը խմբ. 19.09.19 N 1249-Ն)

53. Ընտանիքի բնակության վայրը փոխվելու մասին դիմումը և տրված տեղեկանքի պատճենը պահվում են սոցիալական գործում:

<p>2.</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն</p>	<p>1. անձնական օգտագործման փոխադրա-միջոցներ 2. Բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին</p>	<p>փոխադրամիջոցի սեփականատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի սերիան, համարը, բնակության վայրը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը և մակնիշը, նույնականացման համարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշման համաձայն</p>	<p>առցանց հարցման համաձայն</p>	<p>առցանց հարցման օրը</p>	<p>առցանց՝ վեբ ծառայության միջոցով</p>	<p>ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող (կամ հավակնող) անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հանրային ծառայությունների համարանիշը</p>

3.	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ)	էլեկտրա-էներգիայի անհատ բաժանորդներ	բաժանորդի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը, բաժանորդի քարտի համարը, էլեկտրա-էներգիայի սպառման ամսական չափը, սոցիալական ապահովության քարտի համարը	տարեկան մեկ անգամ, տվյալ տարվա (6-րդ, 7-րդ և 8-րդ ամիսների) ծախսը	սեպտեմբերի 25-ը	մագնիսական կրիչով	
4.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	մաքսային վճարներ	անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը և մաքսային վճարների չափը, սոցիալական ապահովության քարտի համարը	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 25-ը	էլեկտրոնային փոստով, իսկ 2014 թվականի հոկտեմբերից՝ առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
5.	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	մահացածի, ծնվածի, նորածնի ծնողների տվյալները	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
		ամուսնավուծվածների տվյալները	հայրության որոշման վկայականի համարը, ամուսնալուծության վկայականի համարը, ամուսնալուծության օրը, ամիսը, տարեթիվը	առցանց հարցման համաձայն	առցանց հարցման օրը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	

6.	Հայաստանի Հանրապետության արդարա- դատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն	ՄՊԸ ՓԲԸ ԲԲԸ ԼՏՀ ԼՊՀ վստահության վրա հիմնված ընկերություն	կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, գրանցված անդամների անունները, հայրանունները, ազգանունները, քնակության վայրերը, անձնագրերի և վկայականների համարներն ու գրանցման ամսաթվերը, ամիսները, տարեթվերը, հանրային ծառայությունների համարանիշը	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 10-ը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	
----	---	---	---	-----------------------	----------------------	---------------------------------------	--

<p>7.</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>1. սեփականատիրոջ (համասեփականատերերի) մասին տվյալներ</p> <p>2. գյուղատնտեսական նշանակության հողամասերի տվյալներ</p> <p>3. գործարքի մասին</p>	<p>1. ֆիզիկական անձ հանդիսացող սեփականատիրոջ (համասեփականատերերի) անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան և համարը), հանրային ծառայությունների համարանիշը</p> <p>2. անշարժ գույքի գտնվելու վայրը, հողամասի և շինությունների կադաստրային ծածկագրերը, կադաստրային արժեքները, գյուղատնտեսական հողամասերի կադաստրային գուտ եկամտի չափը</p> <p>3. գործարքի տեսակը, պայմանագրի գինը, գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման ամսաթիվը</p>	<p>առցանց հարցման համաձայն</p>	<p>առցանց հարցման օրվան հաջորդող 10-րդ օրը</p>	<p>առցանց՝ վեբ ծառայության միջոցով</p>	<p>անշարժ գույքի օտարման գործարքներով սեփականության իրավունք ձեռք բերողների, հողի սեփականատերերի, հողը վարձակալողների հանրային ծառայությունների համարանիշը</p>
<p>8.</p>	<p>«Գազպրոմ Մրմենիա» ՓԲԸ(համաձայնությամբ)</p>	<p>բնական գազի բնակիչ բաժանորդներ</p>	<p>բաժանորդի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը, բաժանորդի քարտի համարը, բնական գազի սպառման ամսական չափը, հանրային ծառայությունների համարանիշի համարը</p>	<p>նախորդ 12 ամիսների ծախսը</p>	<p>յուրաքանչյուր ամսվա 25-ը</p>	<p>առցանց՝ վեբ ծառայության միջոցով</p>	

9.	Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	ՀՀ-ից ելք ու մուտքի վերաբերյալ	ՀՀ-ից դուրս եկող կամ մուտք գործող անձի ազգանունը, անունը, անձնագրի համարը, ՀՀ-ից ելքի կամ մուտքի օրը, ամիսը, տարեթիվը	յուրաքանչյուր ամիս	հաջորդ ամսվա 10-ը	առցանց՝ վեբ ծառայության միջոցով	Տեղեկատվություն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների անդամների կողմից ՀՀ-ից ելքի կամ մուտք գործելու վերաբերյալ, նշելով տվյալ անձի (անձանց) ազգանունը, անունը, անձնագրի համարը, ՀՀ-ից ելքի կամ մուտքի օրը, ամիսը, տարեթիվը
----	---	--------------------------------	---	--------------------	-------------------	---------------------------------	---

Ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների, կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև տվյալները փոխանակվում են համատեղ համաձայնեցված ձևաչափերով:
(հավելվածը լրաց. 12.01.17 N 3-Ն, 13.07.17 N 841-Ն)

**Հայաստանի Հանրապետության
 կառավարության աշխատակազմի
 ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

**Հավելված N 8
 ՀՀ կառավարության 2014 թվականի
 հունվարի 30-ի N 145-Ն որոշման**

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԿԱՍ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն ակտով կարգավորվում են ընտանեկան կամ սոցիալական (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) կամ հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:
2. Նպաստի և հրատապ օգնության վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ համապատասխան սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին) (այսուհետ՝ տարածքային կենտրոն) այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների սահմանում:
(2-րդ կետը փոփ. 04.06.15 N 582-Ն)
3. Նպաստի և հրատապ օգնության համար ֆինանսական միջոցների չափերն ըստ տարածքային կենտրոնների, հաշվի առած ընտանիքների անապահովության գնահատման կարգով որոշված աղքատ ընտանիքների թիվը, ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորը, ընտանեկան նպաստի բազային մասը և ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար (մինչև 18 տարեկան) անդամին տրվող հավելման չափերը, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Նպաստը նշանակվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ գնահատման համակարգ) հաշվառված՝ (փաստագրված) ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքին՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով

սահմանված կարգով դիմելու ամսվան հաջորդող ամսվանից՝ մինչև նպաստի վճարման դադարեցման հիմքերի առաջացումը:

5. Գնահատման համակարգում հաշվառվելու համար տարածքային կենտրոն ներկայացված դիմում-հայտարարագիրը համարվում է նպաստ նշանակելու համար տրված դիմում:

(5-րդ կետը փոփ. 30.01.15 N 70-Ն)

6. Տարածքային կենտրոնի աշխատողի կողմից տվյալ ընտանիքի համար կազմված Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 42-րդ կետով սահմանված սոցիալական գործը համարվում է նպաստի գործ, որը պահպանում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Ընտանիքը գնահատման համակարգում հաշվառելու (փաստագրելու), ինչպես նաև դրանից հետո ընտանիքի անապահովության միավորի փոփոխության դեպքերում, որը հանգեցնում է տվյալ ընտանիքի ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերելուն կամ իրավունքը կորցնելուն կամ ընտանեկան նպաստի չափի կամ նպաստի տեսակի փոփոխության, տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տպում է տեղեկատվական բազայում ձևավորված՝ տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրի առաջին էջը, որը պահպանվում է սոցիալական գործում:

8. Տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 47-րդ կետով սահմանված տնային այցելության արձանագրությունը՝ եզրակացության ու նպաստ նշանակելու կամ մերժելու առաջարկության հետ միասին, ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին, որը բաժնի պետի կամ գլխավոր մասնագետի առաջարկության հիման վրա ընդունում է որոշում տվյալ ընտանիքին նպաստ նշանակելու մասին:

9. Նպաստ նշանակելու կամ մերժելու որոշման մասին դիմողն իրազեկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պաշտոնական կայքէջում տեղակայված տեղեկատվական բազայից, որը հասանելի է դիմող ընտանիքին՝ իր տվյալների մասով:

10. Ընտանիքի՝ նպաստի իրավունքի ձեռքբերման դեպքում տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում դիմումների էլեկտրոնային մատյանում մուտքագրում է դիմումը, ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 1 ձևի:

11. Եթե ընտանիքի կազմում կա որոշակի ժամկետով սոցիալական խումբ ունեցող մի քանի անդամ, ապա նպաստը վճարվում է մինչև սոցիալական խմբերի ամենավաղ ժամկետը լրանալու ամիսը ներառյալ: Տվյալ ընտանիքի նպաստի իրավունքը տվյալ սոցիալական խմբի ժամկետը լրանալու ամսվա վերջին օրվա դրությամբ վերանայվում է գնահատման համակարգի տեղեկատվական բազայում՝ ծրագրային եղանակով, և նպաստի իրավունքի պահպանման դեպքում՝ անկախ նպաստի տեսակի փոփոխությունից, նպաստի վճարումը շարունակվում է մինչև հաջորդ ժամկետը լրանալը՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով:

12. Եթե լրանում է ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի հաշմանդամության ժամկետը, և այդ պահին չի ներկայացվում համապատասխան փաստաթուղթ, ու չի պահպանվում նպաստի իրավունքը, ապա այդ ընտանիքին նպաստի վճարումը կասեցվում է 3 ամսով:

13. Եթե լրանում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը, և այդ պահին չի ներկայացվում երեխայի ծննդյան վկայականը, և չի պահպանվում նպաստի իրավունքը, ապա նպաստի վճարումը կասեցվում է 2 ամսով:

14. Եթե լրանում է ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի հաշմանդամության ժամկետը, և այդ ընտանիքը 3 ամսվա ընթացքում ներկայացնում է համապատասխան փաստաթուղթ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու մասին, անկախ հաշմանդամության խմբի փոփոխությունից, և դրա արդյունքում ձեռք է բերում անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր, ապա նպաստի վճարումը շարունակվում է կասեցված ամսվանից՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով:

15. Եթե լրանում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը, և 2 ամսվա ընթացքում ներկայացվում է երեխայի ծննդյան վկայականը, և ընտանիքն արդյունքում ձեռք է բերում ընտանիքի անապահովության սահմանային մեծության միավորից բարձր միավոր, ապա նպաստի վճարումը շարունակվում է կասեցված ամսվանից՝ ընտանիքի անապահովության միավորի տվյալ տիրույթի համար սահմանված չափով՝ անկախ նպաստի տեսակի փոփոխությունից:

16. Ընտանիքի անապահովության միավորի փոփոխության դեպքում, որը հանգեցնում է նպաստի չափի կամ տեսակի փոփոխության, տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը (N 1 ձև):

17. Ընտանիքի կազմի փոփոխությամբ կամ ընտանիքի անչափահաս անդամի 18 տարեկանը լրանալու պատճառով նպաստի տեսակի փոփոխության դեպքում՝ տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի նշանակման մասին կարգադրությունը (N 1 ձև):

18. Սույն կարգի 10-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգադրությունները տեղադրվում են սոցիալական գործում:

19. Նպաստը կամ հրատապ օգնությունը նշանակվում և վճարվում է դիմողին: Նպաստի կամ հրատապ օգնության վճարման պահին դիմողի բացակայության դեպքում նպաստը կամ հրատապ օգնությունը կարող է վճարվել ընտանիքի այլ չափահաս անդամի:

20. Նպաստը կամ հրատապ օգնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վճարվել նաև քաղաքացու օրինական ներկայացուցչին (խնամակալ, հոգաբարձու):

21. Միայնակ բնակվող կենսաթոշակատուին նշանակված, բայց նրա մահվան պատճառով չվճարված նպաստը կամ հրատապ օգնությունը՝ ներառյալ մահվան ամիսը, վճարվում է հուղարկավորությունը կազմակերպած անձին՝ տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքի հիման վրա, եթե նա դիմել է միայնակ բնակվող կենսաթոշակատուի մահվան ամսվան հաջորդող երկու ամիսների ընթացքում:

22. Ընտանիքի նպաստի վճարումը դադարեցվում է նպաստի իրավունքը կորցնելու հաջորդ ամսվանից:

23. Դիմողի կողմից՝ նպաստի իրավունք տվող ոչ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր ներկայացվելու կամ նպաստի իրավունք տվող ընտանիքի եկամուտներում կամ ընտանիքի կազմում ու պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր չներկայացվելու դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է դրանց հայտնաբերման ամսվանից:

24. Ընտանիքի՝ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը տեղեկատվական բազայում ստանում և տպում է նպաստի վճարման դադարեցման մասին կարգադրությունը՝ համաձայն N 2 ձևի, որը հաշվառվում է դիմում-հայտարարագրերի հաշվառման մատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի N 2 ձևի:

25. Նպաստի վճարման դադարեցման որոշման մասին դիմողն իրագեկվում է սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով:

26. Նպաստի վճարման դադարեցման դեպքում սոցիալական գործերի հաշվառման էլեկտրոնային մատյանի «Ծանոթագրություն» պտնակում նշվում են նպաստի վճարման դադարեցման մասին որոշումը և ամսաթիվը:

27. Նպաստի վճարման ընթացքում տարածքային կենտրոնի կողմից տվյալ ընտանիքի կազմի փոփոխության հայտնաբերման, ինչպես նաև ընտանիքի անսպասելիության միավորի փոփոխության դեպքում, որը հանգեցնում է նպաստի չափի նվազման, կատարվում է նպաստի չափի վերահաշվարկ և կազմվում է վերահաշվարկի մասին կարգադրություն՝ համաձայն N 3 ձևի:

28. Վերահաշվարկի մասին կարգադրությանը տրվում է հերթական համար, որը գրանցվում է վերահաշվարկի մասին կարգադրությունների հաշվառման մատյանում՝ նշելով կարգադրության համարը, ամսաթիվը, սոցիալական անձնագրի համարը, դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը, վճարման ենթակա գումարը, վճարումից հետո՝ տեղեկատվություն դրա մասին:

29. Վերահաշվարկի մասին կարգադրությունը բաղկացած է 3 մասից: Առաջին 2 մասը լրացնում է տարածքային կենտրոնը: Սոցիալական գործում մնում է կարգադրության առաջին մասը, երկրորդ մասը մնում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վճարող կազմակերպությունում (այսուհետ՝ վճարող կազմակերպություն), իսկ երրորդ մասը՝ լրացված՝ վճարող կազմակերպության կողմից, վերադարձվում է տարածքային կենտրոն՝ վճարման ռեեստրների հետ միասին:

30. Վերահաշվարկի մասին կարգադրության երկրորդ և երրորդ մասերն ուղարկվում են վճարող կազմակերպություն, որը վերահաշվարկի մասին կարգադրության երկրորդ մասն ամրացնում է վճարման ցուցակի, իսկ երրորդ մասը՝ ռեեստրի համապատասխան էջերին:

31. Վճարման ցուցակի և ռեեստրի նույն էջի դարձերեսին ձեռագրով լրացվում է չվճարված գումարի չափը, նշվում է կարգադրության համարը, ստորագրվում և կնքվում է վճարող կազմակերպության պատասխանատու աշխատողի կողմից:

32. Չվճարված գումարի չափն արտացոլվում է վճարումն ավարտվելուց հետո՝ վճարման ցուցակի և ռեեստրի ամփոփ տվյալներում՝ առանձին տողով:

33. Տարածքային կենտրոնը մինչև յուրաքանչյուր ամսվա 8-ը ներառյալ նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն՝ համաձայն N 4 ձևի, այն ընտանիքների մասին, որոնց՝

- 1) ընտանիքի անսպասելիության գնահատման միավորը վերականգնվել է.
- 2) ոչ նպաստառուի մեղքով չստացած նպաստի գումարները վերականգնվել են.
- 3) նշանակվել են ընտանիքում երեխայի ծննդյան կամ երեխայի առաջին դասարան ընդունվելու կամ ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնություններ:

(33-րդ կետը լրաց. 30.01.15 N 70-Ն)

34. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունում տեղեկատվության ուսումնասիրությունից հետո համապատասխան փոփոխություններ են կատարվում գնահատման համակարգի տեղեկատվական բազայում:

35. (կետն ուժը կորցրել է 19.09.19 N 1249-Ն)

36. Հրատապ օգնության համար դիմողը «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածներով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն է ներկայացնում դիմում՝ համաձայն N 5 ձևի, և՝

1) ընտանիքում երեխայի (երեխաների) ծննդյան դեպքում տվյալ երեխայի (երեխաների) ծննդյան վկայականը (վկայականները), իսկ կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի (երեխաների) համար՝ երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթուղթ՝ տրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից.

2) երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ տվյալ երեխայի հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվելու մասին տեղեկանք.

3) ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ մահվան վկայականը:

(36-րդ կետը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

37. Միանվագ հրատապ օգնության նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 6 ձևի, լրացվում և կարվում է սոցիալական գործում:

38. Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է նպաստի իրավունք չունեցող և «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքին՝ անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկությամբ՝ հաշվի առնելով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հանգամանքները:

39. Ընտանիքին եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու համար տարածքային կենտրոնի տվյալ տարածքն սպասարկող աշխատողը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 հավելվածի 47-րդ կետով սահմանված կարգով կատարում է տնային այցելություն և ներկայացնում առաջարկություն եռամսյակային հրատապ օգնության նշանակելու հարցը խորհրդի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ:

40. Տարածքային կենտրոնն ընթացիկ եռամսյակի վերջին ամսվա վերջին 10 աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդ է ներկայացնում այն ընտանիքների ցուցակը՝ համաձայն N 7 ձևի, որոնց եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու մասին դիմումներն ուսումնասիրվել են սույն կարգի 39-րդ կետով սահմանված կարգով:

41. Տարածքային կենտրոնի ղեկավարը խորհուրդ է ներկայացնում տեղեկատվություն հաջորդ եռամսյակում հրատապ օգնության նշանակման համար ունեցած ֆինանսական միջոցների չափի մասին:

42. Խորհուրդը քննարկում է եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու համար ներկայացված դիմումները և 5 աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում հիմնավորված առաջարկություն այն ընտանիքների վերաբերյալ, որոնց նախատեսվում է հաջորդ եռամսյակում նշանակել հրատապ օգնություն: Տարածքային կենտրոնը խորհրդից ստացված ցուցակները կարում է առանձին թղթապանակում և պահում ֆինանսական փաստաթղթերին համահավասար:

(42-րդ կետը փոփ. 12.01.17 N 3-Ն)

43. Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակում է տարածքային կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար հատկացված միջոցների շրջանակներում, որը մշտադիտարկվում է նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության կողմից:

44. Եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է 3 ամիս ժամկետով:

45. Եռամսյակային հրատապ օգնության նշանակման մասին կարգադրությունը՝ համաձայն N 8 ձևի, լրացվում և կարվում է սոցիալական գործում:

46. Եռամսյակային հրատապ օգնության վճարումը դադարեցվում է տվյալ եռամսյակի ընթացքում, եթե՝

1) տվյալ ընտանիքի փաստագրման ժամկետը լրացել է այդ եռամսյակի ընթացքում, և չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը.

2) տվյալ ընտանիքը կամ ընտանիքի անդամներից մեկը կրկնակի է հաշվառված.

3) ընտանիքի անապահովության միավորն այդ եռամսյակի ընթացքում դարձել է «0» կամ ընտանիքը ձեռք է բերել նպաստի իրավունք:

47. Նպաստի և հրատապ օգնության ցուցակները կազմում և սույում է գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ տարածքային կենտրոնների տրամադրած ամենամսյա տեղեկատվության հիման վրա:

48. Նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում՝ 2 ամսվանը միասին) վճարման ցուցակներով՝ համաձայն NN 9 և 10 ձևերի:

49. Բնակչությանը՝ ընտանեկան կամ սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների մասին իրազեկվում է վճարման ցուցակների երկրորդ օրինակը տեսանելի վայրերում փակցնելու միջոցով և սույն կարգի 9-րդ կետով սահմանված ձևով:

50. Տարածքային կենտրոնը վճարման ցուցակները և տիտղոսաթղթերը կազմակերպությունից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում վճարման ցուցակի յուրաքանչյուր էջն ստուգում է, ստորագրում, կնքում և հանձնում համապատասխան վճարող կազմակերպություն՝ համաձայն N 11 ձևի:

51. Տարածքային կենտրոնում տարածքային կենտրոնի ղեկավարի կողմից վճարման ցուցակները հանձնվում են վճարող կազմակերպության լիազորած անձին: Տարածքային կենտրոնի ղեկավարը և վճարող կազմակերպության լիազորած անձն ստորագրում են տիտղոսաթղթի 2 օրինակները, որոնցից մեկը մնում է տարածքային կենտրոնում, մյուսը՝ վճարող կազմակերպությունում:

52. Վճարման ցուցակների էջերը համարակալվում են:

53. Վճարման ցուցակների յուրաքանչյուր էջի գլխամասում նշվում են տարեթիվը, ամիսը, տարածքային կենտրոնի, վճարող կազմակերպության, բնակավայրի անվանումները և վճարող կազմակերպության համարը:

54. Վճարման ցուցակի ամեն տողում նշվում են մեկ նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքի մասին տվյալները:

55. Յուրաքանչյուր էջի վերջում նշվում են այդ էջում գրանցված նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների թիվը, վճարման ենթակա նպաստի կամ հրատապ օգնության, վերահաշվարկի կարգադրությամբ չվճարված և

փաստացի վճարված գումարների չափերը, կնիքի և տարածքային կենտրոնի ղեկավարի ու տեղեկատվական բազայի վարչական պատասխանատու աշխատողի ստորագրությունների տեղերը:

56. Վճարման ցուցակի վերջում նշվում են սույն կարգի 55-րդ կետով սահմանված տեղեկությունների ամփոփ տվյալները:

57. Ընտանիքի չափահաս անդամներից մեկի պահանջով նպաստը կամ հրատապ օգնությունը նրան վճարվում է իր մասով, որի չափը որոշվում է նպաստի կամ հրատապ օգնության գումարն ընտանիքի անդամների թվի վրա բաժանելով:

58. Վճարման ցուցակում մեկ պարզ գծով ջնջվում է ընտանիքին վերաբերող ամբողջ տողը (ներառյալ ռեեստրը) և նույն էջի հակառակ երեսին ձեռագրով լրացվում են ընտանիքի այն չափահաս անդամների անունները, ազգանունները՝ ընտանիքի սոցիալական անձնագրում նշված կազմին համապատասխան, որոնց նպաստը կամ հրատապ օգնությունը վճարվում է իրենց մասով:

59. Եթե պահանջվում է նպաստը վճարել ընտանիքի մի քանի անդամի համար, ապա մեկ անձին հասանելիք մասին համապատասխանող գումարը բազմապատկվում է այդ անձանց թվով և նշվում որպես վճարման ենթակա գումար:

60. Վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում տարածքային կենտրոն է հանձնում լրացված ռեեստրները, փոխադարձ հաշվետվության ակտի՝ համաձայն N 12 ձևի, 5 օրինակ: Հաշվետվության ակտի 2 օրինակը 2 օրվա ընթացքում վերադարձվում են վճարող կազմակերպություն:

61. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամսվա վճարումն ավարտելուց հետո 6 օրվա ընթացքում նախարարություն, համապատասխան մարզպետարան կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ կամ Գյումրու կամ Վանաձորի կամ Արարատի կամ Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմ է ներկայացնում փոխադարձ հաշվետվության ակտի մեկ օրինակը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Ձև N 1

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո

ՆՊԱՍՏԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի _____ ընտանիքին

(անունը, հայրանունը, ազգանունը)

բնակության վայրը _____

մինչև 18 տարեկան անդամները _____, սոցիալական անձնագիր N _____,

անապահովության միավորը _____

նշանակել նպաստ՝ վճարելով _____ դրամ:

Վճարել՝ սկսած _____ 20 թ-ից:

Հաշվարկը կատարեց _____

_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Սոցիալական աջակցության տարածքային _____

գործակալության (բաժնի) ղեկավար _____ (ստորագրությունը)

_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ 20 թ.

Կ. Տ.

(ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն)

Ձև N 2

_____ սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո

ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)
սոցիալական անձնագրի N ____, միավորը ____, մինչև 18 տարեկան անձանց թիվը _____
դադարեցնել նպաստի վճարումը, քանի որ ընտանիքի անապահովության միավորը կազմում է _____:

Սպասարկող աշխատող _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) ղեկավար _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Կ. Տ.
(*ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն*)

Ձև N 3

_____ սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ընտանիքի
Սոցիալական անձնագրի N _____, բնակության վայրը _____

միավորը՝ ____, մինչև 18 տարեկան անձանց թիվը _____,
(վճարման ենթակա գումարը, ամիսները)

կտրման գիծ _____ վճարող կազմակերպություն

Սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմին

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքի
Սոցիալական անձնագրի N _____, բնակության վայրը _____

միավորը՝ _____, մինչև 18 տարեկան անձանց թիվը _____,
(վճարման ենթակա գումարը)

(ամսվա վճարման ցուցակի էջի համարը և ցուցակում հերթական համարը)
Վճարել _____ ամիսների համար վերահաշվարկված
(ամիսների անվանումները)

գումարը՝ ընդամենը _____ դրամի չափով:

Աշխատող _____ 20 թ.
(անունը, ազգանունը)

Մոնիթինգային աշակերտության տարածքային գործակալության (բաժնի) ղեկավար

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ստացա _____ , _____ (գումարը)

_____ (քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (անձնագրի համարը)

Վճարեց _____

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ 20 թ.

կտրման գիծ

Վերադարձվում է _____ տարածքային կենտրոնին

Վ Ե Ր Ա Հ Ա Շ Վ Ա Ր Կ Ի Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն

Մոնիթինգային անձնագրի N _____ ,

_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

_____ (ամսվա վճարման ցուցակի էջի համարը և ցուցակում հերթական համարը)

Վճարված գումարը _____ , _____ ամիսների համար (ամիսների անվանումները)

Վճարող կազմակերպության աշխատող _____

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Կ. Տ.

(ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն)

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մոնիթինգային աշակերտության _____ տարածքային գործակալության (բաժնի) կողմից 20 թ.

_____ ամսվա ընտանիքի չստացած նպաստի գումարի վերականգնման և հրատապ օգնություն նշանակելու մասին

NN ը/կ	Նպաստի և եռամսյակային հրատապ օգնության վերականգնվող գումարը		
	նպաստը	եռամսյակային հրատապ օգնությունը	ընդամենը՝ գումարի չափը

	ընտանիքի թիվը	գումարի չափը	ընտանիքի թիվը	գումարի չափը	
1. Տարածքային գործակալության (բաժնի) սխալը					
2. Նպաստի գործի տեղափոխությունը					
3. Դատարանի որոշումը					
4. Համակարգի աշխատողի մեղքը					
5. Հարգելի պատճառով չստացած					
6. Միայնակ կենսաթոշակառուի մահ					
7. Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնություն					
8. Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն					
9. Ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնություն					
10. Տարածքային գործակալության (բաժնի) կողմից վերականգնված, այդ թվում (11+...+20)					
11. «ՈՉ» (բարեկեցիկ)					
12. «01» (նպաստի կամ օգնություն ստանալու իրավունքից զրկված)					
13. «02» (ավտոմեքենա)					
14. «03» (անհատ ձեռնարկատեր)					
15. «04» (կամավոր հրաժարված)					
16. «05» (Էլեկտրաէներգիա)					
17. «06» (մաքսային)					
18. «08» (առևտրային կազմակերպության հիմնադիր)					

19.	«09» (բնական գագ)					
19.1	«Վ» (վարկային պարտավորություն)					
20.	«Կ» (անշարժ գույք)					
21.	Ընդամենը (1+...+10)					

Սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) ղեկավար

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 20

թ.

Նախարարության աշխատող

_____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը) թ.

_____ 20

Գնահատման համակարգի տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության աշխատող

_____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ 20

թ.

(ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն, 12.01.17 N 3-Ն, լրաց. 26.12.19 N 1923-Ն)

Ձև N 5

Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)

Դ Ի Մ ՈՒ Մ

Քաղաքացի _____ (անունը, հայրանունը, ազգանունը)

Սոցիալական անձնագրի համարը _____

Ունեմ նպաստի իրավունք, խնդրում եմ նշանակել միանվագ հրատապ օգնություն (կատարել «Վ» նշում)

1. երեխայի ծննդյան

2. երեխայի առաջին դասարան ընդունվելու

3. ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ

Ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող հետևյալ փաստաթղթերը (կատարել «Վ» նշում)

1. երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի լուսապատճենը

2. 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական

գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի լուսապատճենը

3. երեխայի առաջին դասարան ընդունվելու մասին տեղեկանքը

4. ընտանիքի անդամի մահվան վկայականի լուսապատճենը

5. տեղեկանք հուղարկավորությունը կազմակերպելու մասին

Ընդամենը ----- էջ:
Էջերի քանակը

Դիմող _____, _____ 20 թ.
ստորագրությունը

Ընդունեցի դիմումը և փաստաթղթերը _____
սպասարկող մասնագետի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____ 20 թ.

Սոցիալական աջակցության
_____ տարածքային գործակալություն (բաժին)

Դ Ի Մ ՈՒ Մ

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Սոցիալական անձնագրի համարը _____

Խնդրում եմ իմ ընտանիքին նշանակել եռամսյակային հրատապ օգնություն 20 թ-ի _____ եռամսյակի համար:

Դիմող _____, _____ 20 թ.
ստորագրությունը

Ընդունեցի դիմումը և փաստաթղթերը _____
սպասարկող մասնագետի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____ 20 թ.

(ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն)

Ձև N 6

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____,
(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,
(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի
(անունը, հայրանունը, ազգանունը)

մահվան կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:

Սպասարկող մասնագետ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 20 թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,

(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի

(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքում _____ երեխայի՝

(անունը, հայրանունը, ազգանունը)

առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:

Սպասարկող մասնագետ _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 20 թ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի _____ ընտանիքին
(անունը, հայրանունը, ազգանունը)

(բնակության վայրը)

սոցիալական անձնագիր _____,

(սոցիալական անձնագրի համարը)

ընտանիքի _____ անդամի

(անունը, հայրանունը, ազգանունը)

ընտանիքում _____ երեխայի՝

(անունը, հայրանունը, ազգանունը)

ծննդյան կապակցությամբ նշանակել միանվագ հրատապ օգնություն՝ _____ դրամի չափով:

Սպասարկող մասնագետ _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Տարածքային մարմնի ղեկավար _____

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 20 թ.

Ց ՈՒ Ց Ա Կ

Սոցիալական աջակցության _____ տարածքային գործակալության (բաժնի) 20__թ. _____
 եռամսյակում եռամսյակային հրատապ օգնության համար դիմած ընտանիքների
 (վերնագիրը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

№	Ազգանունը, անունը, հայրանունը	Սոցիալական անձնագրի համարը	Բնակության վայրը	Փաստագրման ամսաթիվը	Փոստը	Միավորը	Մինչև 18 տարեկան անձանց թիվը	Ընթացիկ գումարը (դրամ)	Սոցիալական աջակցության խորհրդի եզրակացությունը	Ծանոթագրություն
1.	Հակոբյան Արամ Կ.	111111	Կուզնեցովի 14/1	17.04.2002 թ.	1	29.25		16000	բավարարել	
2.	Հակոբյան Արամ Պ.	111112	Կուզնեցովի 14/2	26.04.2002 թ.	2	28.23	5	16000	մերժել	

Առաջարկում եմ ընդգրկել _____ ընտանիք՝ դրամ գումարով: Կարգադրություն N
 Ընդգրկել 1 ընտանիք:
 Վճարել 16000 դրամ

Խորհրդի նախագահ _____ Տարածքային գործակալության (բաժնի) ղեկավար

 (ստորագրությունը) (անունը, ազգանունը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ 20__ թ.

Կ. Տ.
 (ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն)

Ձև N 8

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
 եռամսյակային հրատապ օգնության նշանակման մասին

Քաղաքացի _____
 բնակության վայրը _____
 սոցիալական անձնագիրը _____

ՑՈՒՑԱԿ

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ

ՆՊԱՍՏՆԵՐ _____. _____. 20 _թ

բնակավայրի
անվանումը

ԸՆՏԱՆԵԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ

Տարածքային կենտրոն
001 Վճարող/մասնաձյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՁ, ԷՁ 1 001 Վճարող/մասնաձյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՁ, ԷՁ 1

Բնակության վայրը	Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառա- յություն- ների համա- րանիչը կամ նշում համա- րանիչ չունենալու մասին	Սոցիա- լական անձնագրի համարը	Անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա				Սոցիալա- կան անձ- նագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար			
					գու- մարը (դրամ)	ստո- րագրու- թյունը	ստո- րագրու- թյունը	գու- մարը (դրամ)	ստո- րագրու- թյունը	օրը	ստո- րագրու- թյունը			գումարը (դրամ)	օրը		
	Աղաջանյան Անահիտ Ա.		691687		***				16000				1	691687		16000	
	Աղաջանյան Անահիտ Հ.		691798		***				21500				2	691798		21500	
	Աղաջանյան Անահիտ Մ.		852316		***				27000				3	852316		27000	
													4				
													5				
													6				
													7				

Էջում ընդամենը ----- ընտանիք ----
----- դրամ

Ընդ ----- ընտ.----- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ
 հետ է պահվել ----- դրամ

Վերահաշվարկի կարգադրությամբ
 հետ է

Կ. Տ.

Ընդամենը վճարվել է՝
 ընտանիք դրամ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ _____ պահվել ----- դրամ

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏՈՂ _____ Վճարվել է՝ ընտանիք դրամ

Ձև N 10

ՑՈՒՑԱԿ

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ____20__թ.

բնակավայրի
 անվանումը

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ

Տարածքային կենտրոն
 001 Վճարող/մասնաճյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1 001 Վճարող/մասնաճյուղ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1

Բնակության վայրը	Հանրային ծառայությունների համա- րանիշը կամ նշում համա- րանիշ չունե- նալու մասին	Սոցիալա- կան անձ- նագրի համարը	Անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա				Սոցիալա- կան անձ- նագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար		
				գու- մարը (դրամ)	ստո- րագրու- թյունը	ստո- րագրու- թյունը	գու- մարը (դրամ)	ստո- րագրու- թյունը	օրը	ստո- րագրու- թյունը			գումարը (դրամ)	օրը	
2 ենթը բնակա- րանը	Ազգանունը, անունը, հայրանունը	691687		***			16000					1	691687		16000
	Աղաջանյան Անահիտ Ա.	691798		***			16000					2	691798		16000
	Աղաջանյան Անահիտ Մ.	852316		***			16000					3	852316		16000
												4			
												5			

4	20	24		510000
5	20	28		535500
6	21	27		524000
7	20	23		498000
8	20	34		548000
9	18	32		525000
10	20	28		505000

Հանձնեցի
Տարածքային մարմնի ղեկավար
կազմակերպության

Ընդունեցի
Վճարող
պատասխանատու աշխատող

 Կ. Տ.

 Կ. Տ.

_____ 20 թ.

_____ 20 թ.

Ձև N 12

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱԿՏ

-----վճարող կազմակերպության ----- և սոցիալական
ծառայությունների ----- տարածքային մարմնի միջև -----
ամսվա նպաստի և եռամսյակային հրատապ օգնության գումարների փոխհաշվարկի
վերաբերյալ

		Ամսաթիվը	Ընտանեկան նպաստը	Սոցիալական նպաստը	Հրատապ օգնությունը	Ընդամենը
պարտք վճարումից առաջ	վճարող կազմակերպությունը տարածքային մարմնին					

	տարածքային մարմինը վճարող կազմակերպությանը					
Ֆինանսավորվել է Այդ թվում.						
1.						
2.						
Ետ գանձում						
Վճարում (սկիզբ-վերջ)						
Այդ թվում.						
1. Անավա վերջ						
2. Անավա սկիզբ						
Հետ վերադարձ						
պարտք վճարումից հետո	վճարող կազմակերպությունը տարածքային մարմնին					
	տարածքային մարմինը վճարող կազմակերպությանը					

Պարտքի գումարը նշել բառերով -----
 ----- Վճարող կազմակերպության
 պատասխանատու
 աշխատող -----

Սոցիալական
 աջակցության -----
 տարածքային գործակալության (բաժնի)
 ղեկավար

Հաշվապահ -----
 Կ.Տ.

Պատասխանատու աշխատող -----
 Կ.Տ.

(ձևը փոփ. 04.06.15 N 582-Ն)

(հավելվածը փոփ., լրաց. 30.01.15 N 70-Ն, փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն, 12.01.17 N 3-Ն, 19.09.19 N 1249-Ն, լրաց. 26.12.19 N 1923-Ն)

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՄԻՆԶԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՍՔԻ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ
(հավելվածն ուժը կորցրել է 29.12.15 N 1566-Ն)**

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՄԻՆԶԵՎ 2 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՍՔԻ ՆՊԱՍՏԻ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՄԱՆ
(հավելվածն ուժը կորցրել է 12.01.17 N 3-Ն)**

Հավելված N 11
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱԺԻՆՆԵՐԻ)
ՄԻՋԵՎ ՄԻՆԶԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՍՔԻ ՆՊԱՍՏԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
(հավելվածն ուժը կորցրել է 12.01.17 N 3-Ն)**

Հավելված N 12
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԸՆՏԱՆԻՔԻ (ՔԱՂԱՔԱՑՈՒ) ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ԿԱՄ
ՆՊԱՍՏԻ ՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՅՆՈՂ ՈՉ ՀԱՎԱՍՏԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՉՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ (ՔԱՂԱՔԱՑՈՒ) ՀԵՏ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅԱՄԲ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԿԱԶՄԵԼՈՒ**

1. Մույն կարգով կարգավորվում են ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխությունն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա ավելի վճարված գումարները, ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով, վերադարձնելու կամ ընտանիքի (քաղաքացու) կողմից այդ գումարների վերադարձման պարտքը մարած համարելու մասին «Մոնիթինգային աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհուրդների (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկության կապակցությամբ որոշում ընդունելու հետ կապված հարաբերությունները:

2. Ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխությունն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա ավելի վճարված գումարների՝ ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով վերադարձնելու (այսուհետ՝ ավելի վճարված

գումարների ժամանակացույցով վերադարձնել) կամ ընտանիքի (քաղաքացու) կողմից այդ գումարների վերադարձման պարտքը մարած (այսուհետ՝ ավելի վճարված գումարների պարտքը մարած) համարելու մասին խորհրդի առաջարկությունը ներկայացնելու կապակցությամբ խորհուրդն ընդունում է որոշում քվեարկությամբ, եթե առկա է գրավոր դիմում և գումարվել է խորհրդի նիստ:

3. Խորհրդին կարող են գրավոր դիմել ընտանիքի չափահաս անդամներից մեկը (քաղաքացին), սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (բաժինը) (այսուհետ՝ տարածքային կենտրոն), խորհրդի անդամ կազմակերպությունների, ընտանիքի (քաղաքացու) փաստացի բնակության վայրի համայնքի ղեկավարի աշխատակազմի, համապատասխան մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատողները՝

1) ընտանիքի չափահաս անդամներից մեկը (քաղաքացին) խորհրդին ներկայացրած գրավոր դիմումին իր նախաձեռնությամբ կարող է կցել լրացուցիչ այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են հավաստել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված կողմնորոշիչ ցուցանիշներով իր ընտանիքի ոչ վճարունակ լինելու հանգամանքը:

2) տարածքային կենտրոնի խորհրդին ուղղած գրությանը պարտադիր կցվում է սեփական ուժերով իրականացրած տնային այցելության արձանագրությունը, որում ներառվում են ընտանիքի (քաղաքացու) սոցիալ-տնտեսական փաստացի վիճակի նկարագիրը, դրանից բխող եզրակացությունը և առաջարկությունը:

3) խորհրդի անդամ կազմակերպությունների, ընտանիքի (քաղաքացու) փաստացի բնակության վայրի համայնքի ղեկավարի աշխատակազմի, համապատասխան մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատողների՝ խորհրդին ուղղած գրությանը պարտադիր կցվում է սեփական ուժերով իրականացրած տնային այցելության արձանագրությունը, որում ներառվում են ընտանիքի (քաղաքացու) սոցիալ-տնտեսական փաստացի վիճակի նկարագիրը, դրանից բխող եզրակացությունը և առաջարկությունը: Նշված գրությանը համապատասխան կազմակերպությունն իր նախաձեռնությամբ կարող է կցել լրացուցիչ այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են հավաստել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված կողմնորոշիչ ցուցանիշներով՝ տվյալ ընտանիքի ոչ վճարունակ լինելու հանգամանքը:

(3-րդ կետը փոփ. 04.06.15 N 582-Ն)

4. Խորհրդի՝ ավելի վճարված գումարների ժամանակացույցով վերադարձնելու կամ պարտքը մարած համարելու առաջարկության մասին ընդունած որոշումն իրավաչափ է, եթե դրա ընդունման համար քվեարկել են նիստին մասնակցած խորհրդի անդամների թվի կեսից ավելին:

5. Ընտանիքի չափահաս անդամներից մեկը (քաղաքացին) ավելի վճարված գումարների վերադարձման կամ միանվագ վերադարձման հնարավորություն չունենալու մասին գրավոր կարող է դիմել տարածքային կենտրոն:

6. Տարածքային կենտրոնի ղեկավարը քաղաքացու՝ ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ տրված դիմումի հիման վրա, առանց սույն կարգով սահմանված ընթացակարգերի, 5 աշխատանքային օրվա ընթացքում ընտանիքի (քաղաքացու) հետ կազմում է ավելի վճարված գումարի վերադարձման ժամանակացույց:

7. Տարածքային կենտրոնի ղեկավարը դիմողի՝ ավելի վճարված գումարների վերադարձման կամ միանվագ վերադարձման հնարավորություն չունենալու մասին գրավոր դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է սոցիալական բանկի տեղեկատվական ենթահամակարգի վարչական պատասխանատու աշխատողի և տվյալ տարածքն սպասարկող աշխատողի համատեղ տնային այցելություն:

(7-րդ կետը փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն)

8. Տնային այցելությունից հետո աշխատանքային մեկ օրվա ընթացքում կազմվում է արձանագրություն, որում ներառվում են տվյալ ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների նկարագիրը, դրանից բխող եզրակացությունը և առաջարկությունը: Արձանագրությունն ստորագրում են տնային այցելություն կատարած բոլոր աշխատողները: Արձանագրությունը ներկայացվում է տարածքային կենտրոնի ղեկավարին, որն ընդունում է որոշում տվյալ ընտանիքին ավելի վճարված գումարի վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման համար հայցադիմում ներկայացնելու կամ ժամանակացույցով վերադարձման կամ պարտքը մարած համարելու հարցը սոցիալական աջակցության խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին:

9. Խորհուրդն ավելի վճարված գումարների ժամանակացույցով վերադարձման կամ պարտքը մարած համարելու կապակցությամբ ստացած յուրաքանչյուր գրավոր դիմումը քննարկում է այն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(9-րդ կետը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

10. Խորհրդի նիստին խորհրդի նախագահի որոշմամբ կարող են հրավիրվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, դիմողի փաստացի բնակության համայնքի ավագանու անդամներ և այլ ներկայացուցիչներ:

11. Խորհուրդը կազմում է հանձնաժողով՝ առնվազն երեք անդամով, որում կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության մարզպետարանի աշխատակազմի, խորհրդի անդամ կազմակերպությունների, դիմողի փաստացի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներ:

12. Հանձնաժողովը կատարում է դիմողի փաստացի բնակության վայրի այցելություն, տեղում ուսումնասիրում դիմողի ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները, տալիս եզրակացություն ավելի վճարված գումարների ժամանակացույցով վերադարձման կամ պարտքը մարած համարելու մասին՝ հաշվի առնելով՝

- 1) ընտանիքի կազմը՝ չափահաս անաշխատունակ՝ հաշմանդամ և կենսաթոշակառու, անչափահաս անդամների թիվը, սոցիալական այլ խումբ ունեցող երեխաների առկայությունը, նրանց թիվը:
- 2) ընտանիքում եկամտի կայուն աղբյուրի բացակայությունը:
- 3) կոմունալ վարձավճարների վճարման առկա վիճակը՝ պարտքերը:

4) ընտանիքի ունեցած այլ պարտքեր.

5) բնակարանի (առանձնատան) կահավորվածության, դրա մաշվածության աստիճանը.

6) առողջապահական և հանրակրթական ծառայությունների մատչելիությունը.

7) երկարատև բուժման կարիք ունեցող՝ ընտանիքի հիվանդ անդամ ունենալը.

8) բնական և տեխնածին աղետների հետևանքով տուժած լինելը, բնակարանի հրդեհը, բնակարանի մի մասի կամ ամբողջական փլուզումը, ներտնային հաղորդակցող լինելի վթարները և նմանատիպ այլ հանգամանքներ.

9) ընտանիքի անդամի մահը.

10) կենցաղային ծայրահեղ ծանր այլ պայմաններ:

13. Հանձնաժողովը կազմում է տնային այցելության արձանագրությունը, որն ստորագրում են տնային այցելությանը մասնակցած՝ հանձնաժողովի բոլոր անդամները:

14. Հանձնաժողովի եզրակացությունը քննարկում է խորհուրդը, որի ընդունած որոշումն առաջարկությունը ներկայացնելու կամ չներկայացնելու մասին՝ ստորագրված նիստին մասնակցած բոլոր անդամների կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է տարածքային կենտրոն:

(14-րդ կետը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

15. Որոշմանը դեմ քվեարկած խորհրդի անդամը կարող է հատուկ կարծիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և (կամ) մարզպետին, իսկ Երևանում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և (կամ) Երևանի քաղաքապետին:

16. Հայաստանի Հանրապետության մարզպետը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետը հատուկ կարծիքն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան ստորաբաժանման միջոցով, ուսումնասիրում են խորհրդի կողմից որոշման ընդունման ընթացակարգերի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին: Անհամապատասխանության հայտնաբերման դեպքում խորհրդի կրկնակի քննարկմանն է ուղարկվում հարցը՝ գրության մեջ նշելով հայտնաբերված անհամապատասխանությունները:

(16-րդ կետը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

17. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հատուկ կարծիքն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան ստորաբաժանման միջոցով, ուսումնասիրում է խորհրդի կողմից որոշման ընդունման ընթացակարգերի համապատասխանությունը սույն կարգով սահմանված դրույթներին, անհամապատասխանության հայտնաբերման դեպքում հարցն ուղարկում Հայաստանի Հանրապետության մարզպետին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետին՝ սույն կարգի 16-րդ կետով սահմանված կարգով ընթացք տալու համար:

(17-րդ կետը փոփ. 05.11.15 N 1289-Ն)

18. Տարածքային կենտրոնը խորհրդի առաջարկության մասին որոշումն ստանալուց հետո աշխատանքային երեք օրվա ընթացքում ընդունում է որոշում, որում նշում է քաղաքացու (ընտանիքի) սոցիալական գործի (սոցիալական անձնագրի) համարը, ոչ հավաստի տեղեկատվության հայտնաբերման ամսաթիվը, ճշտված տեղեկատվության կիրառման արդյունքով նպաստի չափի և իրավունքի փոփոխության հանգամանքը, նպաստի վճարման դադարեցման դեպքում՝ դրա ամսաթիվը և ժամկետը, ավելի վճարված գումարի չափը, հետ վերադարձի ենթակա գումարի չափը, սոցիալական աջակցության խորհրդի նիստի ամսաթիվը, խորհրդի առաջարկության բովանդակությունը, խորհրդի առաջարկության հիման վրա ընդունված որոշումը, ժամանակացույց կազմելու դեպքում՝ ժամկետն ու ամսաթիվը, պարտքը մարած համարված գումարի չափը:

19. Խորհրդի կազմած որոշումն առաջարկության մասին և դրա հիման վրա տարածքային կենտրոնի ընդունած որոշումը պահպանվում են տվյալ ընտանիքի նպաստի գործում, իսկ տվյալները մեկօրյա ժամկետում մուտքագրվում են տեղեկատվական բազա:

20. Տարածքային կենտրոնը խորհրդի՝ ավելի վճարված գումարի ժամանակացույցով վերադարձման առաջարկության մասին որոշումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմողի հետ կազմում է ժամանակացույց՝ մինչև 12 ամիս ժամկետով, որն ստորագրում են տարածքային կենտրոնի ղեկավարը և դիմողը՝ ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ:

21. Ընտանիքի չափահաս անդամների անհամաձայնության և (կամ) փոխադարձ համաձայնությամբ հաստատված ժամանակացույցով ձեռք բերված պայմանավորվածությունների չկատարման դեպքում տվյալ ընտանիքին ավելի վճարված գումարները ենթակա են դատական կարգով բռնագանձման:

22. Տարածքային կենտրոնը սոցիալական աջակցության խորհրդի՝ ավելի վճարված գումարի պարտքի մարման առաջարկության մասին որոշումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա հիման վրա ընդունում է որոշում ավելի վճարված գումարի պարտքի մարման մասին: Ընդ որում, պարտքի մարման գումարը չի կարող գերազանցել տվյալ ընտանիքի ստացած վերջին ամսվա նպաստի չափի եռապատիկը:

23. Սույն կարգի 22-րդ կետով սահմանված՝ մարված պարտքի գումարը գերազանցող գումարի վերադարձման համար ընտանիքի (քաղաքացու) հետ կազմվում է ավելի վճարված գումարի վերադարձման ժամանակացույց:

24. Տարածքային կենտրոնը սույն կարգի 22-րդ կետով նախատեսված՝ ընդունած իր որոշման մասին գրավոր հայտնում է տվյալ ընտանիքին և տեղեկացնում, որ դրանից հետո տվյալ ընտանիքի՝ ոչ հավաստի տեղեկատվությամբ դիմում-հայտարարագիր ներկայացնելու պահին, որևէ չափահաս անդամի կողմից (անգամ այլ ընտանիքի կազմում) ոչ հավաստի տեղեկատվության ներկայացման պատճառով ավելի վճարված գումարների պարտքի մարման վերաբերյալ այլևս դրական որոշում չի կարող ընդունվել:

(հավելվածը փոփ. 04.06.15 N 582-Ն, 05.11.15 N 1289-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան

Հավելված N 13
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՅՄԱՆ
(վերնագիրը փոփ. 12.01.17 N 3-Ն)**

1. Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության (այսուհետ՝ նպաստ) վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

(1-ին կետը փոփ. 12.01.17 N 3-Ն)

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները (բաժինները) յուրաքանչյուր ամիս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են տրամադրում տեղեկատվություն նպաստառու ընտանիքների, անձանց և նրանց նպաստի չափի մասին, որոնց հիման վրա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կազմում է նպաստների ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագրերն ու դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

(2-րդ կետը փոփ. 04.06.15 N 582-Ն)

3. Նպաստների վճարումները կատարում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը՝ գանձապետական համակարգի միջոցով փոխանցված գումարների հաշվին:

(հավելվածը փոփ. 04.06.15 N 582-Ն, 12.01.17 N 3-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ
ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ**

Մարզը	NN ը/կ		Համայնքը
	1.	1.	քաղ. Աշտարակ
	2.	2.	քաղ. Թալին
	3.	3.	քաղ. Ապարան

ԱՐԱԳԱԾՈՏՆ	4.	4.	գ. Արագած
	5.	5.	գ. Օշական
	6.	6.	գ. Արտենի
	7.	7.	գ. Նորաշեն
ԱՐԱՐԱՏ	8.	1.	քաղ. Արտաշատ
	9.	2.	քաղ. Արարատ
	10.	3.	քաղ. Վեդի
	11.	4.	գ. Հովտաշատ
	12.	5.	գ. Սիփանիկ
	13.	6.	գ. Տափերական
	14.	7.	գ. Մխչյան
ԱՐՄԱՎԻՐ	15.	1.	քաղ. Արմավիր
	16.	2.	քաղ. Վաղարշապատ
	17.	3.	գ. Փարաքար
	18.	4.	գ. Գայ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	19.	1.	քաղ. Գավառ
	20.	2.	քաղ. Սևան
	21.	3.	գ. Երանոս
	22.	4.	քաղ. Ճամբարակ
	23.	5.	գ. Զովաբեր
	24.	6.	գ. Ծովագյուղ
	25.	7.	գ. Վարդենիկ

ԼՈՌԻ	26.	1.	քաղ. Վանաձոր
	27.	2.	քաղ. Ալավերդի
	28.	3.	քաղ. Ստեփանավան
	29.	4.	քաղ. Ախթալա
	30.	5.	քաղ. Սպիտակ
	31.	6.	գ. Շահումյան
	32.	7.	գ. Գարգառ
ԿՈՏԱՅՔ	33.	1.	քաղ. Հրազդան
	34.	2.	քաղ. Չարենցավան
	35.	3.	քաղ. Եղվարդ
	36.	4.	քաղ. Աբովյան
	37.	5.	քաղ. Բյուրեղավան
	38.	6.	քաղ. Նոր Հաճն
	39.	7.	քաղ. Ծաղկաձոր
	40.	8.	գ. Նոր Գեղի
	41.	9.	գ. Ջրվեժ
	42.	10.	գ. Նոր Երզնկա
	43.	11.	գ. Ջովունի
	44.	12.	գ. Գետարգել
	45.	13.	գ. Կարենիս
	46.	14.	գ. Արզական
	47.	15.	գ. Արտավազ

	48.	16.	գ. Առինջ
	49.	17.	գ. Գեղաշեն
	50.	18.	գ. Բջնի
	51.	19.	գ. Նոր Արտամետ
	52.	20.	գ. Աղավնաձոր
	53.	21.	գ. Քասախ
	54.	22.	գ. Զատ
	55.	23.	գ. Բուժական
	56.	24.	գ. Քանաքեռավան
ՇԻՐԱԿ	57.	1.	քաղ. Գյումրի
	58.	2.	քաղ. Արթիկ
	59.	3.	քաղ. Մարալիկ
	60.	4.	գ. Ազատան
	61.	5.	գ. Բասեն
	62.	6.	գ. Ախուրյան
ՍՅՈՒՆԻՔ	63.	1.	քաղ. Կապան
	64.	2.	քաղ. Մեղրի
	65.	3.	քաղ. Գորիս
	66.	4.	քաղ. Քաջարան
ՎԱՅՈՑ ՉՈՐ	67.	1.	քաղ. Եղեգնաձոր
	68.	2.	քաղ. Ջերմուկ

	69.	3.	քաղ. Վայք
ՏԱՎՈՒՇ	70.	1.	քաղ. Իջևան
	71.	2.	քաղ. Դիլիջան
	72.	3.	քաղ. Բերդ
	73.	4.	քաղ. Այրում
	74.	5.	քաղ. Նոյեմբերյան

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան